«ԵՄ-Ն ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՐ. ԿԱՆԱՉ ՀԱՄԱՅՆՔ՝ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱ»

ԹԵՄԱ 3

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1 **Ընդհանուր հասկացություն**

Գլուխ 2 **Թափոնների սահմանումը և տեսակները**

Գլուխ 3 **Թափոնների կառավարման պրակտիկաները Հայաստանում**

Գլուխ 4 **ԿԿԹ-ի տեղական հաջողված փորձի ներկայացում և տեղայնացում**

Գլուխ 5 **Անձնական էկովարքագծի ուսումնասիրում**

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 1 - ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանաչ կառավարում | Կանաչ քաղաք | Թափոնների կառավարում

Միջազգային քաղաքական օրակարգում 1990-ականների **«կայունության տեսության»,** 2000-ականների՝ **«կլիմայի փոփոխության/ հարմարվողականության»** հիմնախնդիրների ընդգրկմամբ, փորձ արվեց քաղաքային տնտեսության զարգացումը կապել **ժողովրդագրական աճի, սոցիալական հավասարության, տնտեսական աճի** և **շրջակա միջավայրի բազմակողմ կառավարման ու պահպանության** հետ:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 1 - ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանաչ կառավարում | **Կանաչ քաղաք** | Թափոնների կառավարում

«Կանաչ քաղաք» համարվում է այնպիսի քաղաքը, որի հիմքում ընկած է շրջակա միջավայրի երկարաժամկետ պահպանությունը, սոցիալական ներառականությունը և տնտեսական կայունությունը:

Կանաչ քաղաքներն ստեղծում են ավելին՝ ավելի քիչ ռեսուրսով (Green cities produce more for less), այսինքն՝ կանաչ կառավարման դեպքում քաղաքները դառնում են ավելի ռեսուրս խնայող, կլիմայի փոփոխություններին հարմարվող, նվազագույն գազ արտադրող, սոցիալապես ներառող և արդար:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 1 - ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանաչ կառավարում | Կանաչ քաղաք | **Թափոնների կառավարում**

«Թափոնների կառավարումը» կանաչ քաղաքի ձևավորման համար կենտրոնական ոլորտ է: Չնայած վերջին տարիներին իրականացվել են քաղաքային կոշտ թափոնների հավաքման բարեփոխումներ, սակայն դեռևս առկա են որոշակի մարտահրավերներ.

- աղբահանության իրականացում, քանի որ քաղաքային կոշտ թափոնները, վտանգավոր թափոնները (ՎԹ-ներ) կամ այլ թափոններ չեն հեռացվում ԵՄ պահանջներին համապատասխանող սանիտարական աղբավայրեր,
- ցածր նյութական արդյունավետություն՝ կախված թափոնների տեսակավորմա և վերամշակման սահմանափակ մակարդակից:

ԳԼՈՒԽ 1 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանում «Թափոնների մասին» օրենքի (ընդունվել է 2004թ.-ի նոյեմբերի 24-ին) հոդված 4-ը սահմանում է, թե ինչ բան է թափոնը. արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոններ (այսուհետ՝ թափոններ), արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդներ, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները:

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Կենցաղային թափոն»

- ԵՄ-ը կենցաղային թափոնը սահմանում է որպես «տնային տնտեսություններում գոյացած թափոն և իրենց բնույթով ու բաղադրությամբ տնային տնտեսություններում գոյացած թափոններին նման այլ թափոններ»:
- Հայաստանում «Թափոնների մասին» օրենքի (ընդունվել է 2004թ.-ի նոյեմբերի 24-ին) հոդված 4-ը սահմանում է, թե ինչ բան է թափոնը. արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոններ (այսուհետ՝ թափոններ)՝ արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդներ, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները:
- Աշխարհի շատ երկրներում տեղական ինքնակառավարում իրականացնող մարմինները պատասխանատու են կենցաղային թափոնների հավաքման համար հատկապես սանիտարական պատճառներով և, ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի, սա վերաբերում է նաև Հայաստանին:

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Խոշոր եզրաչափերի թափոն»

- Խոշոր եզրաչափերի թափոնները տնային տնտեսությունների այն թափոններն են, որոնք չափազանց խոշոր կամ ծանր են սովորական աղբահանության ծառայության կողմից ընդունվելու համար: Խոշոր եզրաչափերի իրերը ներառում են կահույք (բազկաթոռ, բազմոց, սեղաններ), խոշոր կենցաղային սարքավորումներ, սանիտարական տեխնիկա (լոգարան, զուգարանակոնք, լվացարան), խոտի հնձիչ և այլն:

  «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքում (2011թ.) խոշոր եզրաչափերի թափոնը սահմանվում է հետևյալ կերպ.

- Հոդված 3, 2) աղբ, գ. խոշոր եզրաչափերի աղբ՝ «մարդու կենսագործունեության հետևանքով կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացող արտադրության և սպառման թափոններ, որոնք, հաշվի առնելով դրանց ֆիզիկական հատկությունները (ներառյալ՝ չափը, ծավալը կամ քաշը), անհնար է հավաքել, պահել կամ փոխադրել կենցաղային աղբի համար նախատեսված՝ սովորաբար կիրառվող տեխնիկական միջոցներով»:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Շինարարական և քանդմանթափոններ»

- «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքը սահմանում է շինարարական և քանդման թափոնները որպես «քաղաքաշինական գործունեության ընթացքում առաջացող, շինարարական վերանորոգման, շենքերի վերակառուցումից և քանդումից առաջացող թափոններ»:
  Եվրոպական հանձնաժողովը շինարարական և քանդման թափոնները (Շ/Ք) սահմանում և մեկնաբանում է հետևյալ կերպ.
- «Շինարարական և քանդման թափոններն առաջանում են շենքերի և քաղաքացիական ենթակառուցվածքների շինարարության, շենքերի քաղաքացիական ենթակառուցվածքների ամբողջական կամ մասնակի քանդման, ճանապարհների պլանավորման և պահպանման աշխատանքների արդյունքում»:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Շինարարական և քանդմանթափոններ»

Քաղաք/տարածք	Բնակչություն	Շ/Ք թափոնների արտադրություն (տոննա/տարի)
Երևան	1.1 մլն	330,000
Երևանից դուրս	1.8 մլն	180,000
Շ/Ք թափոնների ընդհանուր ծավալը Հայաստանում		510,000

Շ/Ք թափոնների արտադրությունը Հայաստանում (տոննաներով)

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Ավտոմոբիլային թափոններ»

Ավտոմոբիլային թափոնները սովորաբար սահմանվում են որպես մեքենաների վերանորոգման կետերից սկիզբ առնող թափոններ: Նման թափոնների օրինակներ են՝

- Յուղեր և մեքենայի արգելակային համակարգի հեղուկ
- Յուղի ֆիլտրեր
- Ասբեստից պատրաստված արգելակային բարձիկներ
- Կապար/ծծումբ պարունակող մարտկոցներ
- Լամպեր
- Սառեցնող նյութեր

Ավտոմոբիլային թափոնները կարող են նաև պարունակել «կյանքի ավարտ ունեցող մեքենաներ» (ԿԱՄ)՝ մեքենաներ, որոնք այլևս չեն օգտագործվում կամ անվտանգ օգտագործման ենթակաչեն: Եվրոպական օրենսդրության մեջ առկա սահմանումը վերաբերում է մինչև առավելագույնը 3,500 կգ քաշ ունեցող մեքենաներին:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Արտադրական թափոններ»

Արտադրական թափոնները արդյունաբերական գործունեության ընթացքում գոյացած թափոններն են, ինչը ներառում է գործարանների, արդյունաբերության ճյուղերի, աղացների, հանքարդյունաբերական գործունեության արտադրական գործընթացի ժամանակ ոչ պիտանի համարված ցանկացած նյութ:
Արտադրական թափոնները կարող են լինել կոշտ, հեղուկ և գազային:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Էլեկտրական թափոններ»
(էլեկտրոնային կամ էլեկտրական թափոններ)

Էլեկտրական թափոնները իրենց պիտանելիության ժամկետի ավարտին հասած էլեկտրական կամ էլեկտրոնային լայն շրջանակ ներառող սարքավորումներն են. էլեկտրական հոսանք օգտագործող, սովորաբար մարտկոցի կամ վարդակի միջոցով միացող սարքավորումները ներառվում են այս խմբում:
Օրինակներ են նաև բջջային հեռախոսները, խոհանոցային կամ այլ կենցաղային սարքավորումները, համակարգիչները, հեռուստացույցները և այլն:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Առողջապահական թափոններ»

Առողջապահական թափոնները ներառում են առողջապահական միավորումներում և հիվանդանոցներում առաջացած բոլոր տեսակի թափոնները:

Բացի այդ, այստեղ ներառվում են նաև տանը առողջապահական խնամք տրամադրելու ընթացքում գոյացող թափոնները:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Այլ վտանգավոր թափոններ»

Վտանգավոր թափոններն այնպիսի թափոններ են, որոնք իրենց բնույթով, ջրի և օդի հետ շփման դեպքում կյանքի և առողջության նկատմամբ ներկայացնում են շատ ավելի մեծ ռիսկ, քան ոչ վտանգավոր թափոնները և ունեն քայքայիչ, թունավոր, ռադիոակտիվ, դյուրավառ կամ նմանատիպ հատկություններ:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Գյուղատնտեսական և այգեգործական թափոններ»

Կան գյուղատնտեսական թափոնների կամ ֆերմերային տնտեսություններում գոյացող թափոնների սահմանման տարբեր ձևեր: Թափոնների տեսակներն ինչ-որ չափով կախված են գործունեության տեսակներից: Գյուղատնտեսական թափոնը բաղկացած է տարբեր տեսակի թափոններից, ինչպիսիք են.

1. Հացահատիկի, արմատների, յուղերի, մրգերի, բանջարեղենի, մսի, ձկան, ծովամթերքի, շղթայի ընթացքում՝ կաթի և ձվի արտադրությունից մինչև սպառում տեղ գտնող կորուստներ
2. Մսի կամ կաթի արտադրության ընթացքում կենդանիներից ստացվող գոմաղբ
3. Օգտագործված թունաքիմիկատների, հերբիցիդների և պարարտանյութերի փաթեթավորման նյութեր (օր.՝ պլաստիկ տարաներ)
4. Ժամկետանց թունաքիմիկատներ, հերբիցիդներ և պարարտանյութ
5. Կենդանիների համար օգտագործված ժամկետանց դեղեր
6. Կենդանիների մարմնի մնացորդներ
7. Մեքենասարքավորումների և մեքենաների յուղեր

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մարզ	Բնակչություն **1000 մարդ**	Թափոնի քանակ **1000 տոննա/տարեկան**	Թափոնի քանակ **կգ/մ, տարեկան**
Երևան	1,081.8	310.2	286.7
Արագածոտն	125.4	3.6	28.7
Արարատ	256.7	15.3	59.6
Արմավիր	263.9	15.4	58.4
Գեղարքունիք	228.3	17.7	77.3
Լոռի	215.5	16.9	78.4
Կոտայք	251.6	33.8	134.3
Շիրակ	233.3	21.6	92.6
Սյունիք	137.6	14.1	102.5
Վայոց Ձոր	49.0	9.4	191.8
Տավուշ	122.2	11.9	97.3
Ընդհանուր	2,965.3	469.9	158.5

Թափոնների գնահատված քանակը մարզերի և Երևան քաղաքի համար (2018թ.)

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Աղբավայրեր»

- Աղբավայրը կամ սանիտարական աղբավայրը օբյեկտ է, որը կառուցվում է թափոնների ընդունումը և տեսակավորումը վերահսկվող, սանիտարական պայմաններում իրականացնելու համար, որպեսզի դրանք որևէ բացասական ազդեցություն չունենան բնության կամ շրջակա միջավայրի վրա:
- Եվրոպական միությունում «Աղբավայրերի մասին» դիրեկտիվ 48 կարգավորում է աղբավայրերում թափոնների կառավարման հարցը: Այն իրականացվում է անդամ երկրների կողմից 2001թ.-ի հուլիսի 16-ից:
- Ըստ «Աղբավայրերի մասին» ԵՄ դիրեկտիվի՝ կան երեք տեսակի աղբավայրեր.
  - Վտանգավոր թափոնների աղբավայրեր
  - Ոչ վտանգավոր թափոնների աղբավայրեր
  - Իներտ թափոնների (մանրախիճ, քարեր, մաքուր յուղեր և այլն) աղբավայրեր

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Թափոնների կուտակման վայրեր»

Թափոնների կուտակման վայրերն այնպիսի տեղեր են, որոնք պատշաճ կերպով չեն ընտրվել կամ նախագծվել բնապահպանական օրենսդրության համաձայն և որտեղ կամայականորեն թափոններ են նետվում առանց կամ ընդամենը մասնակի վերահսկմամբ կամ կառավարմամբ:

Այստեղ սովորաբար շահագործող անձնակազմ և ենթակառուցվածքներ կամ բեռնաթափումն ուղղորդող անձնակազմ չկա, թափման մակերեսը մեծ է, թափոնը՝ ցրված ամենուր:

OPTIMIZE

ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ ԱՂԲԱՎԱՅՐ

գործում է 1950-ականներից

9 500 000

տոննա աղբ

- Վերամշակում ✗
- Տեսակավորում ✗
- Ցանկապատում ✗
- Թափոնի այրում ✓
- Վնասազերծում** ✓

Նուբարաշեն՝ 9700
Էրեբունի՝ 126 300
բնակիչ

2-3 կմ

Օրական
700-800
տոննա աղբ

Տարեկան
300 000
տոննա աղբ

** Հավաքված աղբը խտացվում և վնասազերծվում է՝ ծածկվելով 25-30սմ հողի շերտով

! Աղբից առաջացած թունավոր ջրերը թափանցում են հողային շերտեր՝ վնասելով հարակից բուսականությունը

Աղբյուր՝ Երեւանի քաղաքապետարան

Ամփոփ
ամփոփելով կարևորը

ampop.am

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ



Թափոնների կանխատեսվող արտադրությունը Երևանի և մարզերի համար մինչև 2031թ

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 2 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սովորենք տեսակավորել | https://learningapps.org/29260733

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԲԱԶԵԼՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՌԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒՄԱՍԻՆ

1999

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Թափոնների կայուն կառավարման օգուտները

- Աշխատատեղերի ստեղծում
- Դրական ազդեցություն զբոսաշրջության վրա
- Տեխնոլոգիական նորարարություն
- Ռեսուրսարդյունավետություն
- Էներգիայի արտադրություն
- Հումքային նյութերի պահպանություն
- Հողի առավել արդյունավետ օգտագործում
- Ընդհանուր թափոնների կառավարման բարելավված ծախսարդյունավետություն



- Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում
- Վտանգավոր թափոնների աղտոտվածության նվազեցում
- Ջրի և հողի աղտոտվածության կրճատում
- Սնուցիչ նյութերի օգտահանում, ինչը հանգեցնում է հողի առավել արդյունավետ կառավարման:
- Հումքային նյութերի պահպանություն

- Հիվանդությունների առավել արդյունավետ վերահսկում
- Առողջապահական ռիսկերի նվազեցում այրված թափոնների հետևանքով առաջացած հողի, ջրի և օդի աղտոտվածության կրճատման միջոցով:

- Ավելի մեծ քաղաքացիական մասնակցություն և ներդրում համայնքային զարգացման գործում
- Համայնքային ծառայություններից և տեղական իշխանություններից գոհունակության ավելի բարձր մակարդակ
- Երկրի կամ քաղաքի ավելի մեծ հեղինակություն

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ի՞նչ է թափոնների հիերարխիան

Թափոնների հիերարխիան սահմանում է թափոնների նվազեցման և կառավարման քայլերի առաջնահերթությունը և սովորաբար ներկայացվում է դիագրամի տեսքով:

Գլխիվայր պատկերված բուրգը նշանակում է, որ քաղաքականության ամենանախընտրելի քայլը թափոնների գոյացման կանխումն է:

Թափոնների հիերարխիա



OPTIMIZI

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում կոշտ թափոնների կառավարման բարելավումը

պարտադիր պետք է իրականացվի հետևյալ սկզբունքների կիրառմամբ՝

1. մարդու առողջության պաշտպանություն և պահպանում,
2. շրջակա միջավայրի պաշտպանություն, բարելավում և պահպանում,
3. բնական ռեսուրսների ողջամիտ և արդյունավետ օգտագործում,
4. շրջանաձև տնտեսության սկզբունքների որդեգրում,
5. թափոնների հիերարխիայի կիրառում (դիրեկտիվ 2008/98/EC),
6. էներգաարդյունավետության բարձրացում,
7. ներմուծվող ռեսուրսներից Հայաստանի կախվածության նվազեցում:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման (ԱՊԸ) համակարգերի ներդրման ռազմավարություն

2018թ. ապրիլի 12-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Արտադրատեսակների համար արտադրողի (ներմուծողի) պատասխանատվության ընդլայնման համակարգերի ներդրման ռազմավարությանը և դրանից բխող 2018-2021թթ միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը: ԱՊԸ համակարգի նպատակները հետևյալն են.

1. թափոնների գոյացման կանխարգելում,
2. թափոնների քանակի նվազեցում դրանց առաջացման աղբյուրի մոտ,
3. վերամշակում՝ որպես երկրորդային հումքային նյութեր,
4. վերամշակում՝ որպես երկրորդային էներգետիկ ռեսուրս,
5. թաղում աղբավայրերում (թափոնների կառավարման ամենաքիչ նախընտրելի մեթոդ):

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քաղաքականությունների մշակում և վերահսկողություն

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

- Վերահսկողություն
- Իրավակիրարկում
- Տվյալների հավաքագրում
- Տվյալների հրապարակում

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին

- Վերահսկողություն
- Իրավակիրարկում
- Տվյալների հավաքագրում
- Տվյալների հրապարակում

ՀՀ կառավարություն

- Քաղաքականություններ

ներառյալ՝

- սակավաթափոն տեխնոլոգիաների ներդրման, թափոնների հավաքման եւ օգտահանման խթանման տնտեսական մեխանիզմների ապահովումը.

- վնասազերծված եւ օգտահանման ոչ ենթակա թափոնների տեղադրման օբյեկտների ստեղծման ապահովումը

ՀՀ տարածքային կառավարման մարմիններ (ոչ վտանգավոր թափոններ)

- Քաղաքականություններ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

- Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալություն
- «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ
- Քաղաքականություններ
- Թափոնների կադաստր
- Մշտադիտարկում
- Տվյալների հավաքագրում
- Լիցենզավորում
- Իրավակիրարկում

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

- Տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման վարչություն
- Քաղաքականություններ
- Թափոնների կառավարման կարգավորումներ
- Աշխատանք տեղական ինքնակառավարման մարմինների հետ

ՀՀ առողջապահության նախարարություն

- «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
- Քաղաքականություններ

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քաղաքականությունների իրագործում և համակարգում տվյալների հրապարակում

Տեղական ինքնակառավարման մարմիններ (ոչ վտանգավոր թափոններ)

- Հավաքում
- Տեղափոխում
- Հեռացում
- Աղբավայրերի շահագործում
- Աղբավայրերի փակում
- Տվյալների հավաքագրում
- Տվյալների հրապարակում
- Պայմանագրեր և վերոնշյալի համակարգում

Վտանգավոր թափոնների գործածման լիցենզիա ստացած մարմիններ (բժշկական, արդյունաբերական, կապարային մարտկոցներ, սնդիկ պարունակող, թրչնաղբ,)

- Հավաքում
- Տեղափոխում
- Մշակում/վերացում
- Ժամանակավոր պահեստավորում
- Հեռացում աղբավայրում
- Տվյալների հավաքագրում
- Տվյալների հրապարակում

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

- Թափոնների պահեստավորման հետ կապված արտակարգ իրավիճակներին արձագանք

ՀՀ վիճակագրական կոմիտե

- Ներգրավված մարմինների կողմից տրամադրվող տեղեկատվության և տվյալների մշակում (որոշ որակի վերահսկմամբ) և հրապարակում

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կանխում և կրճատում - Պլաստիկ տոպրակներ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը մշակել է ծրագիր՝ միտված մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակների սպառման կրճատմանը:

Թալին քաղաքն այս առումով ընտրվել է որպես պիլոտային քաղաք:

Ընթացքի մեջ են երկտեղ աղբարկղերի տեղադրումը, պլաստիկ շշերի վերամշակումը, ինչպես նաև Թալին քաղաքի աղբավայրի ցանկապատման և վերանորոգման աշխատանքները:

Այս քաղաքականությունը մեկնարկել է մեկ համայնքում, որից հետո փորձ է արվելու այն տարածել ողջ մարզի, իսկ հետագայում՝ երկրի վրա:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կանխում և կրճատում

Բժշկական թափոններ

«Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոններ ու նորմեր փաստաթղթում հատուկ գլուխ նվիրված է թափոնների ծավալի կրճատման առաջնահերթությանը, ըստ որի հաստատությունը պետք է գնահատի վտանգավոր քիմիական թափոնների քանակի կրճատման հնարավորությունները հետևյալ հերթականությամբ. առաջնահերթություն է տրվում ծագմա նվազեցմանը, որին հետևում է պաշարի օգտահանումը և կրկնակի օգտագործումը, վերավնասազերծումը և վերջնական վնասազերծումը:
Նկարագրվում են նաև վտանգավոր քիմիական թափոնների ծավալի կրճատմանը վերաբերող զանազան առաջարկություններ:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կանխում և կրճատում

Արտադրական թափոններ

Միավորված ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (UNIDO) 2015թ.-ին նախաձեռնել է «Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» (ՌԱՄԱ) մեկամյա ծրագիր, որի նպատակն էր բարելավել թիրախային արդյունաբերական ոլորտների ՓՄՁ-ների բնապահպանական գործունեությունը և ռեսուրսների արդյունավետությունը, ներառյալ թափոնների կրճատումը մասնավորապես գյուղատնտեսական /սննդի, քիմիական և շինարարական նյութերի արտադրության ոլորտներում:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերօգտագործում և վերամշակում

Ըստ ուսումնասիրությունների Հայաստանում գործում են 20-ից ավելի կոշտ թափոններ վերամշակող ընկերություններ, որոնց թվում՝ թղթի վերամշակմամբ զբաղվող ավելի քան 10 կազմակերպություն, 5- ից ավել պլաստիկ, 3 ապակի, պոլիէթիլեն վերամշակող բազմաթիվ փոքր և միջին առևտրային տնտեսվարողներ:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերամշակում - Պլաստիկ

«Քլինլենդ» ընկերությունն առաջիններից է, որ Հայաստանում զբաղվել աղբի տեսակավորման և վերամշակման աշխատանքներով՝ հիմնադրվելով 2009թ.-ին: Կնքված պայմանագրերի համաձայն՝ որոշ քաղաքներ իրենց կենցաղային աղբը հանձնում են «Քլինլենդ»-ին վերամշակման համար: Ներկայումս գործարանը վերամշակում է PET տեսակի պլաստիկ շշեր՝ ստանալով մանրափաթիլներ: Ամսական վերամշակվում է մոտ 160 տոննա պլաստիկ շիշ: Ողջ արտադրանքը արտահանվում է: Գործարանը վերամշակված թղթից նաև արտադրում է ծալքավորման թուղթ և ծալքավոր ստվարաթղթի արկղեր:

Հայաստանում վերամշակվում են PET, HDPE, PP, LDPE, PS և այլ տեսակի պլաստիկ նյութեր: HDPE, PP և PS տեսակները հումքային նյութ են դառնում դույլերի, կախիչների, ծաղկամանների և տեղական շուկայում առկա ավելի քան 20 այլ տեսակի արտադրանքի համար:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերամշակում - Թուղթ/ստվարաթուղթ

ՀՀ-ում գործում են թղթի վերամշակմամբ զբաղվող ավելի քան 10 կազմակերպություններ, որոնք վերամշակում են ստվարաթուղթ, սպիտակ թուղթ և գրաֆիկական թղթի թափոններ փաթեթավորման ստվարաթուղթ, փաթեթավորման թուղթ, զուգարանի թուղթ և թղթե այլ ապրանքներ արտադրելու նպատակով: Խնդրահարույց է, սակայն, զուգարանի թղթի արտադրության ստուգումն ու վերահսկումը պահանջվող չափորոշիչներին համապատասխանելու առումով:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերամշակում – Ապակի

Ապակին վերամշակվում է տարբեր օբյեկտներում և ըստ գույների: Սպիտակ/թափանցիկ ապակին վերամշակվում է տարբեր տեսակի հուշանվերային շշի արձանիկներ պատրաստելու համար (կախված պատվերից), որոնք շշալցվում են ոչ միայն ալկոհոլային խմիչքներ արտադրող տեղական օբյեկտներում, այլ նաև արտահանվում են միջազգային շուկա:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերամշակում - Կապար պարունակող մարտկոցներ

Հին մարտկոցներից կապարի օգտահանումը սովորաբար իրականացվում է փոքր օբյեկտների կողմից, ինչպիսիք են մարտկոցներ վաճառող և փոխող խանութները:

Այս օբյեկտները կապարը վերամշակում են ինքնուրույն կամ հին մարտկոցները վաճառում են ընկերությունների, որոնք իրականացնում են վերամշակումը և ամենայն հավանականությամբ արտահանում դրանք:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերամշակում - Ավտոմեքենայի թափք

Երկար տարիներ իրականացվել է շարքից դուրս եկած մեքենաների կմախքների չվերահսկվող տեղադրում ճանապարհների եզրերին, դաշտերում, ձորերում և այլ վայրերում:

Հայաստանում կան մի քանի մետաղաձուլական ընկերություններ, որոնք կազմակերպում են նման թափոնների հավաքումը մետաղի օգտահանման նպատակով:

Նման ընկերություններից է Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում գտնվող «Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերօգտագործում – Շինարարություն

Վերօգտագործվող հիմնական նյութերն են շենքերի ու շինությունների ապամոնտաժումից առաջացող քարերը, դռներն ու պատուհանները, կտուրների ծածկերը և այլ նյութեր, որոնք հնարավոր է օգտագործել ըստ իրենց նախնական նշանակության:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերօգտագործում – Կահույք

Մեծ եզրաչափերի թափոնների վերօգտագործման լավ օրինակ է «Նորոգի» ռեսուրսային կենտրոնը, որը բացվել է 2018 թվականին Եվրոպական միության աջակցությամբ՝ «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամի «Հայաստանում կենսապայմանների բարելավում» ծրագրի շրջանակում: Կենտրոնը որպես նվիրատվություն ստացած կահույքն ու կենցաղային իրերը վերանորոգելուց հետո մատչելի գներով դնում է վաճառքի ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերօգտագործում - Ներկի տարաներ

Գյուղական համայնքներում ներկերի պլաստիկ տարաները վերօգտագործվում են տնային տնտեսություններում՝ որպես ջրի կամ կաթի տարաներ, ինչն իսկապես կարող է բարձր առողջապահական ռիսկեր առաջացնել:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերօգտագործում – Ավտոպահեստամասեր

Վերանորոգման միջոցով բազմակի վերօգտագործման վառ օրինակ է ավտոմոբիլային ոլորտը, որտեղ մեծ տարածում ունի մի շարք փոխարինող մասերի վերանորոգումը, օրինակ՝ արգելակային (արգելակման կոճակներ ու սկավառակներ, ամորտիզատորներ և այլն):

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերօգտագործում - Պլաստիկ և ապակե շշեր

Գյուղական համայնքներում դրանք հաճախ այրում են տաքացման նպատակով՝ պատճառաբանելով, որ շատ ավելի արագ ու լավ է այրվում, քան փայտը, և ավելի շատ ջերմություն է տալիս: Տարածված է նաև պլաստիկ և ապակե շշերի որոշակի վերօգտագործման անվերահսկելի, սանիտարական նորմերին չհամապատասխանող գործունեություն: Դրանք հիմնականում հավաքվում են աղբամաններից, առանձին մարդկանց կամ կազմակերպությունների կողմից, հանձնվում ապակու ընդունման կետերում, լվացվում 5-10 դրամով և վերավաճառվում 15 դրամով՝ օգտագործելով գինու, դոշաբի և վաճառքի ենթակա այլ ապրանքների համար:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերօգտագործում - Էլեկտրական թափոններ

Նորոգված էլեկտրական սարքավորումների՝ սառնարանների, լվացքի մեքենաների, փոշեկուլների, արդուկների, ջրատաքացուցիչների, օդորակիչների և խոհանոցային սարքերի՝ միքսերների, բլենդերների, տոստերների, ջեռոցների և այլնի համար առկա են լավ զարգացած ենթակառուցվածքներ և շուկա: Կան մի քանի առցանց հարթակներ օգտագործված, սակայն նորոգված և շուկայում հայտնված էլեկտրական սարքավորումների համար:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Էներգիայի օգտահանում (թափոնից էներգիա)

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Էներգիայի օգտահանում(թափոնից էներգիա)
Հայաստանում իրականացվել են մի շարք ներդրումային ծրագրեր, որոնք ներառել են կենսաբանական թափոնից էներգիա ստացող ենթակառուցվածքներ՝

- «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» թռչնաբուծական թափոնների օգտահանման կայան,
- «Համապարփակ աջակցություն Հայաստանի լեռնային շրջանների կայուն տնտեսական զարգացման համար» ծրագիր,
- «Գյուղական համայնքներում բիոզանգվածով ջեռուցման լուծումներ – «BioRuralHeating» ծրագիր,
- Գազի կորզման և այրման համակարգ Երևանի Նուբարաշեն աղբավայրում:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 3 - ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Էներգիայի օգտահանում(թափոնից էներգիա)

Ավելի փոքր մասշտաբով առկա են թափոնից էներգիա ստանալու հետևյալ պրակտիկաները՝

- գոմաղբից մեթանի արտադրություն որոշ գյուղերում,
- կենսաբանական թափոններից որպես վառելիք օգտագործվող պելետի արտադրություն,
- ջեռուցման և խոհանոցում օգտագործման նպատակով չոր գոմաղբի այրում գյուղական վայրերում,
- շինարարական և քանդման թափոններից առանձնացված փայտյա թափոնների այրում,
- կենսազանգված (տերևներ, էտման մնացորդներ) քաղաքներում,
- թղթե թափոնների այրում,
- գյուղական վայրերում, հատկապես սառը եղանակին խառը թափոնների այրում:

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 4 - ԿԿԹ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՀԱՁՈՂՎԱԾ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ

- «Կանաչ մարզ. Երևանից դուրս թափոնների նվազեցման, վերաօգտագործման և վերամշակման կոչ»
- Դավթաշեն Էկո թաղամաս 2019-2020թթ
- Տաթև Էկո գյուղ 2019 մայիս - 2020 հունվար

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 4 - ԿԿԹ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՀԱՁՈՂՎԱԾ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ

«Կանաչ մարզ. Երևանից դուրս թափոնների նվազեցման, վերաօգտագործման և վերամշակման կոչ»

Ապարան համայնքում միջոցառումները իրականացվել են Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) Կենսաբազմազանության Ինտեգրված Կառավարում նախագծի կողմից Ապարանի համայնքապետարան/Aparan municipality/-ի հետ համագործակցությամբ:

ԳԼՈՒԽ 4 - ԿԿԹ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՀԱՁՈՂՎԱԾ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ

Դավթաշեն Էկո թաղամաս2019-2020

Բնակիչներին տրամադրվել են գունավոր տոպրակներ՝ նախատեսված թղթի, պլաստիկի, ապակու համար: Ամեն ամիս հավաքագրվել

- մինչև 500 կգ թուղթ,
- մինչև 200 կգ պլաստիկ,
- մինչև 300 կգ ապակի:

Նախաձեռնությանը մասնակցել է շուրջ 300 ընտանիք

ԳԼՈՒԽ 4 - ԿԿԹ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՀԱՁՈՂՎԱԾ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ

Տաթև Էկո գյուղ 2019 մայիս - 2020 հունվար

Ըստ նախագծի.

- Գյուղի բնակիչները տարանջատելու են ու հավաքելու թափոնները,
- Յուրաքանչյուր հավաքված թափոնի կգ-ի դիմաց ստանալու են միավորներ՝ վերամշակված թափոններից պատրաստված իրերի հետ փոխանակելու համար
- Հնարավորության սահմաններում իրազեկելու են Տաթևի վանական համալիր այցելած
- զբոսաշրջիկներին՝ ***#ՊլաստիկըԱղբՉԷ*** կարգախոսով
- Իրենց փորձը տարածելու են հարևան գյուղերում

նախագծի մեկնարկել է 0 ֆինասավորմամբ
6 ամիս - 307 կգ թափոն

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 4 - ԿԿԹ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ

Տաթև Էկո գյուղ 2019 մայիս - 2020 հունվար

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 4 - ԿԿԹ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ

Տաթև Էկո գյուղ 2019 մայիս - 2020 հունվար

OPTIMIZE

ԳԼՈՒԽ 4 - ԿԿԹ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՀԱՁՈՂՎԱԾ ՓՈՐՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՅՆԱՑՈՒՄ



ԽՄԲԱՅԻՆ ԱՌԱՁԱԴՐԱՆՔ

Ընտրել ներկայացված մոդելներից մեկը և ինտեգրել Ձեր իսկ համայնքում

ԳԼՈՒԽ 4 - ԱՆՁՆԱԿԱՆ ԷԿՈՎԱՐՔԱԳԾԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ

Էկոլոգիական ոտնահետքի հաշվարկ

OPTIMIZE

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ARMENIA TREEPROJECT
«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ

Jinishian Memorial Foundation
JMF

ARMENIAN ENERGY AGENCY

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

OPTIMIZE